



ՃԱՐՏԱՐԱԿԵՄ Է. ՏԻԳՐԱՆՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԻԼԼԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ




րեանում կառուցվող Ամենայն Հայոց Կաթողիկոսի վիլլան մեր ճարտարապետական պրակտիկայի տեսակետից հանդիսանում է բավականին ուրույն բնույթի կառուցում: Վիլլան, որ նախատեսված է բարձրաստիճան հոգևոր անձի բնակության համար, միաժամանակ ծառայելու է որպես պաշտոնական ընդունելությունների վայր: Վիլլայի կառուցման համար հատկացված

բոլոր շենքը շորս կողմից կանաչապատել գեղեցիկ զբոսապուրակով. այս նկատառումով շենքը կարմիր գծից (մայթից) 16 մետր հտ է քաշված:

Վիլլան նախագծված է երկհարկանի. առաջին հարկում տեղավորված են դպիթը և օժանդակ շինությունները, իսկ երկրորդ հարկում՝ շքահանդեսասրահները և կաթողիկոսի առանձնասենյակները:

Մեր ամենահիմնական ճարտարապետա-



Կաթողիկոսական վիլլայի շենքի նախագիծը (գլխավոր նակառք).

Նախագծի ճեղինակ՝ ճարտարապետ Է. ՏԻԳՐԱՆՅԱՆ

տեղամասը գտնվում է առաջին և երկրորդ շրջանային փողոցների միջև՝ Ստալինի պողոտայի շրջանում և կազմում է 0,4 հեկտար, որը հնարավորություն է տալիս ամ-

կան խնդիրն է հանդիսացել կառուցման ուրույն կերպարի որոնումը. անհրաժեշտ էր մի միջին օրգանական շաղկապ գտնել շենքի քաղաքացիական և հոգևոր բնույթների մի-


ջև, ճարտարապետական խնդիրների լուծման ընթացքում մենք միշտ ձգտել ենք օգտագործել հին-հայկական ճարտարապետության լավագույն տրադիցիաները և ժամանակակից ճարտարապետության նվաճումները:

Շենքի ինչպես գլխավոր, այնպես և բակի ու կողմնային ճակատները վճռված են հարուստ լուծերի տեսքով, ձևավորված կամարաշար սրահով: Գլխավոր և բակի ճակատների կողմից բաց տիպի անտաքին աստիճանները վիլլայի ներքին առանձնասենյակ-

նաշով ծածկված զբոսապտրակի միջև: Զբոսապտրակը ծածկված կլինի ծաղկանոցներով, դեկորատիվ ու պտղատու ծառերով, գեղեցիկ ձևավորված ծառուղիներով, փոքր շատրվաններով, գեղաբանդակ վազերով և այլն:

Անհրաժեշտ է հիշատակել նաև շուգունից կամ բրոնզից ձուլված գեղարվեստական վանդակապատի մասին, որով շրջապատվելու է զբոսապտրակը:

Նվազ ուշադրություն չի դարձված և վիլլայի ներքին բարեզարդմանը:



Կաթողիկոսական վիլլայի մեծ հյուրասրահի ինտերյերի նախագիծը.
ճախագծի հեղինակ՝ Գաբրիել Բաբայան Է. ՏԻԳՐԱՆՑԱՆ

ները և դահլիճները կապում են զբոսապտրակի հետ:

Տեղական սքանչելի երեսապատման շինանյութերը — բազալտը և Անիի բաց-նարնջագույն մաքուր հղկված տուֆը, ստվերոտ սրահով հարուստ կամարաշարը, արխիվոյաների և խոյակների նուրբ զարդանկարները, անծածկ զբոսապտրակային աստիճանները և քանդակված սյունակապերը (բալյուստրադաները) հոյակապ ներդաշնակություն մպիտի ստեղծեն շենքի և հյուրիղ կա-

Հայաստանի բնական և մասամբ էլ արհեստական մարմարով զարդարված նախամուտքից այցելուները լայն, չորս մետրանոց, միաթուխք աստիճաններով կբարձրանան երկրորդ հարկը: Աստիճանները շքեղ ձևավորված են կամարներով ու սրահներով, որոնք տանում են դեպի հյուրասրահ, մեծ սեղանատունը, կաթողիկոսի առանձնասենյակները, ինչպես նաև դպի եկվոր հյուրերի ննջասենյակները:

Հատուկ ուշադրություն է դարձված հյու-

րասրահի և մեծ սեղանատան դեղազարդմանը: Առաջին դահլիճը կենտրոնական մասում ծածկված է գմբեթով, որը հանգչում է մարմարապատ չորս սյուների հենված կամարների վրա: Գմբեթի ներքին մակերեսը ծածկված կլիների կեսոններով և որմնանկարներով:

Հատակը հարգարված կլիների դեղարվեստական պարկետով՝ նկարազարդված հայկական մանրանկարչության ոգով: Նախատեսվում է մեծ սեղանատունն ամբողջապես զարդարել փայտաքանդակներով՝ տեղական թանկարժեք փայտանյութերից պատրաստված:

Ամբողջ շենքում կիրառվելու են դեղարվեստական որմնանկարում և ծեփում:

Ուշադրություն է դարձված նաև ներքին կահավորմանը, ենթադրվում է գորգերի, գե-

ղարվեստական գործվածքների և դրապերոյկայի կիրառություն: Ամբողջ կահ կարասիքը պետք է պատրաստվի հատուկ նկարների հիման վրա:

Մեր հիմնական նպատակը և ձգտումն է եղել ճարտարապետական և այլ դեղարվեստական միջոցների այս մեծ ներդաշնակությունը ու սինթեզով ցույց տալ այն մեծ բազմազանությունը, բազմակողմանիությունը, ձևունությունը և ինքնատիպությունը, որոնցով այնպես հարուստ է հայկական ճարտարապետությունը և որի հնարավորությունները լայն ու անսպառ են:

Ներկայումս կատարված են հողային աշխատանքները և դրված են հիմքերը:

Բոլոր հիմնական կառուցողական աշխատանքները ենթադրվում է ավարտել 1947 թվի աշնանը:

